

9965

335

F-41

1920

ՌՈՒՍԼԱՆԸ. ՍՊԵՐՍԻԱՆ. ՊԵՐՍԻԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ, ՀԱՆՐԱՊԵՏ.

Պրոլետարնէր բոլոր երկրներ, միացիք.

Ա. ԲԷԲԷԼ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՒ

ՍՈՅԻԱԼԻԶՄ

335
P-41

591

№ 41

ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԳՈՄԻՍԱՐԻԱՅԻ
ԾԱՌԱԿԱՆ—1920

№ 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՌՄՈՒՆԻՍՏԻԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐ.
ԾԵՐԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԿՈՒԹՅԱՆ ԼՈՍՏ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- 1) Ռ. Սոց. Ֆեդ. Խորհրդ. Հանրապետություն Սահմանադրությունը:
- 2) Ն. Լեւնի. «Նամակ Ամերիկեան բանւորներին»—գինը՝ 1 ր.
- 3) Վ. Ֆրիշ. «Պրոլետարական պեղծիւն»—գինը՝ 3 ր.
- 4) Չիպեր. «Բերստից յետոյ» (Ձեկուցում Խորհուրդների 5-րդ Հա-
մագումարին)—գինը՝ 1 ր.
- 5) Ներհ. «Դեպքեր Բազում. Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազմ
Խորհրդային Իշխանութիւնը»—գինը՝ 1 ր.
- 6) Ն. Լեւնի. «Կարլ Մարքս» (Համառոտ կենսագրութիւնը և ծա-
րագծի շարադրութիւնը)—գինը՝ 3 ր.
- 7) Ներհ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակ-
տիկան»—գինը՝ 1 ր.
- 8) [redacted] «Կոմունիստների ծրագիրը»—գինը՝ 10 ր.
- 9) ՊԱՆԼՈՒԷ. (Վելաման) «Ասիան և իմ դերը համաշխարհային պա-
տերազմի մէջ»—գինը՝ 7 ր.
- 10) [redacted] 1 «Կոմունիստական Կուսակցութիւնը Գերմանիա-
յում». II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով)—գինը՝ 1 ր.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսոնին»—գինը՝ 1 ր.
- 12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—գ. 3 ր.
- 13) Հ. ՅՈՒՍԵՖՅԱՆ. «Դէպի բաղրապահ կեանք»—գինը՝ 1 ր.
- 14) [redacted], Ի. Բ. [redacted] և Վ. [redacted]—«Ն. Լեւնի» (Վա-
ղմիք Իլիչ Ուլանով)—գինը՝ 3 ր.
- 15) Վ. ՄԱՐԿՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմունիստական Մանիֆեստ»—Պլեխա-
նովի, Կառուցում և հեղինակների առաջաբաններով—գ. 10 ր.
- 16) Պ. ԼԱՖՈՐԴ. «Տնտեսական Ուսուցիչների և Կոմունիզմ»—գ. 3 ր.
- 17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Եւրոպայի և Խորհրդային Իշխանութիւնը և ինչ-
պէս է նա կազմուած»—գինը՝ 2 ր.
- 18) «Փրանսիական Մեծ Յեղափոխութիւնը»—գինը՝ 3 ր.
- 19) Վ. ԿԵՐԶԵՆՅԵՒ. «Ինչպէս վարել ժողովը»—գինը՝ 3 ր.
- 20) Վ. ԵՐԵՄԵՅԵՒ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութիւն» գ. 2 ր.
- 21) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ո՞ւր է հետ էք դուք, գիւղացիք»—գինը՝ 1 ր.
- 22) Վ. ԱՎՆԵՍԵԱՆ. «Հայ փախստականներին»—(ձրի):
- 23) Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան (Բոլշեւիկների)
ծրագիրը—գինը՝ 3 ր.
- 24) Ինտերնացիոնալի Պատմութեան—գինը՝ 1 ր.
- 25) Ն. Լեւնի. «Թէգիտներ բուրժուական և պրոլետարական դեմոկրա-
տիայի մասին»—գինը՝ 50 կոպ.
- 26) «Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան ներկայացու-
ցիչի ղեկուցումը III Կոմունիստական Ինտերնացիոնալին»—գի-
նը՝ 60 կ.
- 27) «Կոմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի
պրոլետարներին»—գինը՝ 1 րուր.
- 28) Ն. Լեւնի. «Երրորդ Ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»
—գինը՝ 1 ր.
- 29) Ն. Լեւնի. «Եւրոպայի և լինի մեք կուսակցութեան տնւնը»—
գինը՝ 1 ր.
- 30) ՊԱՆԵԿՈՒԿ. «Թալանի բաժանումը» գինը՝ 4 ր.
- 31) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Իմպերիալիզմ և Արմենիա»—գինը՝ 5 ր.
- 32) «Կարմիր Աստղ»—գինը՝ 50 կ.

ՌՈՒՍԱՆՍ. ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՓԵՐՆԵՐԱՏԻՆ ԴՈՐԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԾ.

300

1170-ԲԷ

Ա. ԱԷԲԷԼ

335

F-4B

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՒ

ՍՈՑԻԱԼԻԶՄ

1003
1493

13663-58



№ 41

ՀԱՅԱՍՏԱՆԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԻԿԱՆ
ԿՈՄՄՈՆԻՍՏԻԿԱՆ ԼՈՍՏ ԵՆ ՏԵՍԵԼ—1920

№ 41

2001

ԳՕԳՕՖ ՔԱՅԱՆԱԹԻ ՆԱՄԱԿԸ

«Vloksstaat»-ի յարգելի խմբագրութեանը
Հայացիզում

«Vloksstaat» - ի № 114 - ի առաջնորդող յօդ-
ւածում, նոյնմբերի 21 - ին, դուք Ձեր հրատարա-
կու թեամբ լոյս ահա՞ծ «Գերմանական բէյխտադի
և լանդտագների պարլամենտական գործունէու-
թիւնը և սօցիալ-դեմօկրատիան» դրքոյկից բե-
րում էք մի կտոր:

Այնտեղ, ի միջի ալլոց, ցուցադրւած է այն
փաստը, թէ կառավարու թիւնը և եկեղեցին «եզ-
րաչրաբար պաշտպանում են իրար, երբ խնդիրը
վերաբերում է ժողովրդին ստրկացնելուն, լիմա-
րացնելուն ու կեղեքելուն»։ Թէ կաթոլիկ հոգեո-
րականութիւնը և ներկայ կառավարութիւնը «գոր-
ծում են ձեռք-ձեռքի, երբ խօսքը ժողովուրդը
դերի դարձնելու մէջ է»։ Վերջապէս, թէ հոգեո-
րականութիւնը միշտ «բէակցիայի և վախազու-
թեան կողմնակից է»:

Ես կաթոլիկ եկեղեցու անդամ եմ և կաթո-
լիկ հոգեորականութեան ներկայացուցիչ, իրրև

քահանայ, ես պարաաւոր եմ հաղնել մի շոր, որ ամեն ինձ պատահող մարկանց ցոյց տայ, թէ ես պատկանում եմ կաթոլիկ հոգեւորականութեան. ուստի և դուք համաձայնեցէք, որ վերոյիշեալ մեղադրանքները շոշափում են և իմ անձնական պատիւս, և որ, այդ մեղադրանքների շնորհիւ ես միանգամայն վարկաբեկ եմ եղած «Volksstaat - ի բոլոր ընթերցողների առաջ, որոնց հետ կեանքում կարող եմ հանդիպել. այդ պատճառով ես ստիպւած եմ բողոքել Ձեր օրինաւորութեան դէմ և խնդրել Ձեզ, որ Ձեր ընթերցողների գիտութեանը հասցնէք այն, ինչ ես կասեմ ի պաշտպանութիւն և արդարացում ինձ: Այդ ես համարում եմ իմ իրաւունքն ու պարտքը, մանաւանդ, երբ ես ոչ մի բան չունեմ, բացի իմ պատւից և բարի անունից. և հետեւապէս, հէնց ճիշտ ինձ համար է առած, թէ՛—պատիւը կորսւեց, ամեն բան կորսւեց:

Դուք հակառակորդ եք կաթոլիկ կրօնին, դուք հակառակորդ եք նոյնպէս լիբերալ բուրժուազիային: Երբ վերջինիս կաշառւած իդէօլոգները Տէլ-կիաններին*) յանցանքները վերագրում են Ձեզ, ամբողջ ուժով դուք դռնում եք Ձեր հասցէին յարուցած զրպարտութեան դէմ, և միանգամայն արդարացի նկատում եք, թէ սօցիալիզմը չի կարելի

*) Ս.-դ.-ի այն ժամանակայ երկու ուղղութիւնների տարածաշրջանները մասնակցող անմաստորութեան է անհարկոս:

պատասխանատու անել մասնաւոր անձնաւորութիւնների արարմունքների պատճառով, որ իրենց սօցիալիստ են անւանում. ու հասեւրմանների և հագէնկլեվէրների հետ համակարծիք լինելուց հրաժարում էք: Բայց և այնպէս, ես ի յոյժ զարմանս իմ, համոզւեցի, որ դուք պապական իշխանութեան և պապական հոգեւորականութեան վերաբերմամբ նոյն այդ սխալի մէջ եք բնկնում, որք համար այնպէս կծու մեղադրում եք լիբերալներին: Եկեղեցին դուք պատասխանատու եք անում սրբալիների համար, իսկ կրօնը—իր հետեւողների պապականութիւնների ու զանցառութիւնների համար. առանձին մարդու յանցանքը Դուք դնում եք ի նախատինս ամբողջի. մեղաւորի հետ Դուք դատաւարում եք անմեղին: Յոյց տւէք մի արատ, չարիք ինչքան էլ նա խոր արմատացած լինի ամեն երկրալին բնութեան մէջ—անարդարութիւն, ստորութիւն, որ խստիւ արդելած ու դատաւարտած չլինեն կաթոլիկ կրօնը և կաթոլիկ եկեղեցու վարդապետութիւնը. մի երեւոյթ առաջէք ինձ, որ դուք նախատինքի ու անարդարքի արժանի եք համարում, որի վերացնելուն ձգտում եք, և որը կարող էր չվերանալ, եթէ կաթոլիկ եկեղեցու ուսուցմունքն անցնէր կեանքի մէջ: Առաջէք ինձ մի բան՝ լաւ, վսեմ, ցանկալի. թւեցէք թէկուզ սր՛ է առաքինութիւն, որը կծողկեր, առանց որ

մարդիկ հետևեին քրիստոնէական վարդապետութեան. դուք չէք կարող այդ աներ: Ուստի և պարտաւորւած պիտի համաձայնէք, որ Ձեր քրն-նադատած զանցառութիւնների մէջ մեղաւոր չեն ոչ կաթողիկոսի թիւներ, ոչ կըօներ, ոչ էլ եկեղեցին, այլ՝ մարդիկ:

Մի՞թէ դուք չգիտէք, որ հազարաւոր հարիւր-հազարաւոր ու միլիօնաւոր քրիստոնեայ-կաթողիկներ և կաթողիկ քահանաներ արդէն 1800 տարւայ ընթացքում բառացի կատարել են Բրիտանոսի խօսքերը. «Եթէ ուզում ես լինել կատարեալ գնա, ծախիր ստացւածքդ, բաժանիր տղբասներին և հետևիր ինձ»: Մի՞թէ դուք չգիտէք, որ անպիսի մարդիկ, ինչպէս Փրանցիսկ Ստիգլին, Վինցէնտ Պատրիկ և անհամար ուրիշներն աղքատների համար հաւաքել են միլիօններով տալեր, բաժանել են իրենց ամբողջ կարողութիւնը չքաւորներին, և Սատմութիւնը ու մերձաւորի սիրուց, բարեհաճ կամքով ընտրել են թշուառութիւնն իրենց վիճակ, որպէս զի թշուառների հետ թշուառ լինեն:

Մի՞թէ դուք չգիտէք, որ մինչև այսօր էլ հազարներով ու հարիւր հազարներով կաթողիկներ և քահանաներ այդ օրինակին են հետևում:

Օրինակ եթէ Ֆօն Կետտելէր եպիսկոպոսի եղբայրը գուտարական մօլնդիրը փոխում է վեղարաւոր կուսակրօնի կոշտ փարաշալի հետ և սպալա-

կան աշխոյժ կեանքը միարանութեան զաժան հրդ-նաւորութեան հետ. եթէ հարցաւոր սուսեողը փիլիսոփայական սիստեմների հետ՝ Սոկրատից ու Պրոտագորասից մինչև Շոպենհաուէրը, Ֆէյերբախը, Լասսալն ու Մարքսը ծանօթանալով, վերջ ի վերջոյ գալիս է այն եզրակացութեան, թէ կաթողիկութիւնը ամենալաւ և ամենից աւելի կատարեալ սուսուցմունքն է, և դառնում է առաւածարան սուքահանայ, որպէս զի բոլոր ջանքերը նւիրէ այդ միակ ուղիղ ու փրկարար վարդապետութիւնը տարածելուն, — եթէ այդ փաստերը Ձեզ յայտնի են, ապա, հարց է ծագում, ի՞նչ իրաւունք ունէք Դուք կապիճանքի ենթարկելու այդ մարդկանց անկեղծութիւնն ու վեհանձնութիւնը և մեղադրել նրանց «շահագոյ կեղծիքի» մէջ:

Երբ սօցիալիզմի հակառակորդները նման մեղադրանքներ են բարձրացնում Լիբկնեխտ և Բեքել պարոնների դէմ, Դուք խորին ցասումով մատնացոյց էք անում այն դժւարին կացութիւնը, որի մէջ Ձեզ դնում է Ձեր սկզբունքների պաշտպանութիւնը: Այդպէս ահա ես էլ, իմ կողմից, նոյնպէս դժկամակում եմ այդ մեղադրանքի համար, թէ և միաժամանակ կարծում եմ, որ պարզապէս կարելի է հերքել այդ մեղադրանքները, ցոյց տալով այն խղճալի դրութիւնը, որի մէջ ներկայումս գտնւում է կաթողիկ քահանաների մեծագոյն մասը:

հաղիւ թէ ուրիշ կարգի ծառայողներ, ուսուցիչներէց ու գիշերային պահապաններէց զատ, աւելի քիչ վարձատրութիւն ստանալիս լինեն, քան կաթօլիկ ցածր հոգևորականութիւնը: Եւ կարող եմ ապացուցել Ձեզ, որ նիւթականի հոգմից ես աւելի վատթար կացութեան մէջ եմ, քան ամեն տան ծառայող ու նաժիշտ, մինչդեռ չնչին վարձատրութիւնը չարիքներից փոքրագոյնն է. ատելութիւն ու հալածանք, ծաղր ու ծանակ,—ահա կաթօլիկ քահանայի ներկայիս բախտը:

Մի՛ մոռացէք, ուրեմն, այսուհետեւ երբեք ասացւածք. «մի անիր ուրիշներին այն, ինչ որ չես ուղղւած ուրիշներն անեն քեզ»:

Թեքեա դուք մտածէք այժմ՝ եթէ հիմք չկայ ամբողջ կաթօլիկ հոգևորականութիւնը մեղադրելու կեղծիքի ու շահատակութիւնների մէջ, դո՛նէ այն քահանաները, որոնք իրենց կոչումին վերաբերւում են լուրջ ու ազնիւ,—պարզապէս տենդային երազողներ ու տխմարներ են: Այլապիսի խօսքերն, իմ աչքում, շատ աւելի ներելի կլինէին. բայց և այդ դէպքում էլ ինձ անհասկանալի պիտի թւար, թէ ինչպէս են կարողանում «օցիալիստները» դարմանալ ու զանգատել, երբ իրենց հոտուցանում են նոյնպիսի ասականներով:

Մինչև հիմա ես կարծում էի, թէ «Volksstaat»-ի խմբագիրներն նկատելի չափով օժտւած են

բարոյական ըմբռնումով և բարեխիղճ ոգով, քան իրենց ընկերակիցները օՖֆիցիօզ ու լիբերալ մտաւորի մէջ, ապա թէ ոչ չէի գրի այս համառօտ պաշտպանումն և ուղարկի Ձեզ: Յուսով եմ, որ յետաւած չեմ.

Ղ.Ի.Լ.Ն.Լ. Գագօֆ քահանայ:

Դիւիֆէից, Պրուսիայում Օւլէնդորֆի մօտ.

Նոյեմբ. 22 ին 1873 թին:

ԲԵՐԵԼԻ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Արժանապատիւ հայր.

9-րդ համաբում Դուք տեղ էք տւել մի նամակի, որով Դուք, իբրև «եկեղեցու սպասաւոր», աշխատում էք պաշտպանել այն մեղադրանքներից, որ ես արել եմ եկեղեցու և առհասարակ կրօնի դէմ իմ «Գերմանական բէյխտադի պարլամենտական գործունէութիւն...» զրքոյցի մէջ: Ձեր պաշտպանութիւնը պահանջում է պառասխան, և այն էլ ինձնից, որպէս զրքոյցի հեղինակից, Պատասխանի ուշացնելն իմ կողմից արգաւորւում է երկարաւի հիւանդութեամբ, որ ինձ խանդարում էր դրել իմ պառասխանը մասամբ աւելի ընդարձակ գուրս եկաւ, բայց զբանից դուք կաքող էք եզրակացնել, որ ես Ձեր առար-

կաթընները համարել եմ բաւականին կարեւոր ու նշանակալից, որ նրանց հերքումին ընդարձակ մի դրութիւն նւիրեցի:

Պուք անձնապէս ձեր պատիւը շոշափած ու վիրաւորւած էք համարում իմ զրքոյկի մի քանի տեղերից, բայց մի անգամ էլ կարգալով, դուք, թերեւ, կհամաձայնէք, որ հիմք չունէք զբա համար: Քահանաներից առանձին անհատներին չեմ դիպել, ես երբէք չեմ ժխտել, որ «եկեղեցու սպասաւորներն» մէջ կան աջնախիսնները, որոնք իրենց կոչումը կտարուծ են սրտանց, մաքուր համոզումով, ես մինչև անգամ այդ չէի կարող անել, մանաւանդ որ որոշ չափով ծանօթ եմ այն պատրաստական հիմնադրութիւնների հետ, որոնք նախասահմանւած են դաստիարակելու ու ձեռակերպելու մատաղ, նախապաշարունակներից ազատ և դեռ անզխտակ զլուխները «եկեղեցու սպասաւորութեան» համար: Ես առաջ կերթամ, ես ընդունում եմ, որ կան հազարաւոր մարդիկ, մինչև անգամ կըլծւած՝ որոնք հոգով և մարմնով նւիրւած են եկեղեցուն և նրա վարդապետութեանը, որ կան հազարներով, տասը հազարներով ու եղել են միլիոնաւոր մարդիկ, որոնք ամեն տեսակի բարձր գոհարերութիւններով աշխատել են եկեղեցուց իրենց հողիների փրկութիւն գտնել: Բայց այդ բոլորն արդեօք հակառակն է ասում իմ բերած հայ-

եացքներին, որոնց մասին այժմ խօսք կայ: Ոչ, բոլորովին ոչ: Նոյն անձնւորութիւնը, անձնաւորացութիւնն ու ճգնութիւնը, նոյն ֆանատիկոս հաւատք, որով աչքի են ընկել ու մինչև օրս էլ աչքի են ընկնում քրիստոնէութեան միլիոնաւոր համակրողները, ոչ պակաս չափով յատուկ է նոյնպէս լուղալականութեանը, Բուդդայի, Կոնֆուցիոսի և Մահմեդի միլիոնաւոր համակրողներին. նրանք բոլորը, նոյն իրաւունքով, ինչպէս դուք, կարող են ցոյց տալ իրենց կրօնի յառաջադիմութիւնները, նրա հետեւողների զոհարերութիւնները:

Եթէ հնարաւոր լինէր վիճակադրական փաստերով հաստատել, թէ կրօններից որի հետեւողներն աւելի ջերմեռանդ ու գործունեա են եղել, աւելի ողջախոհութիւն, ճգնութիւն ու անձնազոհութիւն են ցոյց տւել՝ այն ժամանակ անտարակոյս կերեւար, որ Բուդդայի կրօնը ամեն կողմից էլ բարձր է կաթողիկոսութիւնից և քրիստոնէութիւնից առհասարակ:

Այդպիսով, եթէ ձեր տեսակէտից գնահատելու լինենք կրօնը, այն ժամանակ ճշմարիտ և իսկական կրօնը, իրօք, պէտք է բուդդալականութիւնը՝ հանդիսանայ, իսկ ես պիտի գուրս գամ մի մեծ յանցագործ, երբ յայտարարում եմ, թէ՛ չնայելով ոչ մի բանի, բուդդալականութիւնն էլ որպէս և քրիստոնէութիւնը, միայն խանգարել և

խոչնդոտ է հանգիստացել մարդկութեան ինքնուրոյնութեան ու ազատագրական զարգացման: Գալով ձեզ, դուք ձեր եկեղեցու վարդապետութեամբ ստիպւած էք բուդդայականութիւնը համարել կեղծ, անմիտ, հերետիկոս ուսուցմունք, թէև հեշտութեամբ կարելի է ապացուցել, որ բարոյագիտութեան և բարոյականութեան տեսակէտից բուդդայականութիւնը ոչ միայն անգի չի առն քրիստոնէութեանը, այլ և թէ բարոյագիտական սկզբունքները, քրիստոնէական ուրիշ շատ դաւանանքների ու ծէսերի հետ նախնական բուդդայականութիւնից են անցել քրիստոնէութեան, որ 400 տարով փոքր է նրանից:

Եւ ահա մենք մօտենում ենք խնդրի կարեւոր կէտին: — Ի՞նչ բան է, իսկապէս, քրիստոնէութիւնը: Պատասխան. — ուրիշ կրօնների նման, դա էլ մարդու ստեղծագործութիւն է: Այն մարդը, որ քաղաքակրթութեան ցածր աստիճանների վրայ է կանգնած և չի կարողանում պարզ բնութեանը ընդհանրութիւնն ու բնութեան երևոյթները, որ նրան վնաս են պատճառում կամ օգուտ բերում. որ չնչին հասկացողութիւն անգամ չունի թէ ինքը, մարդը, ինչ գիրք է գրաւել. — բոլորն ինչ իրեն անհասկանալի է ու անգի ունի իր շուրջը՝ վերագրում է գերբնական գոյութիւնների, որ իրենց կամքով ու քմահաճոյքով առաջացնում են իրեն անմատչելի

երեւոյթները և որոնք նա աշխատում է պաղատանքներով, աղօթքներով, ծէսերով ու զահարութիւններով իրեն օգտակար դարձնել: Ազգերի քաղաքակրթական մակերևոյթին նայած, որ կաւած է գլխաւորապէս նրանց կենցաղավարութեան նիւթական պայմաններից, իսկ այնուհետև հողի ու կլիմայի յատկութիւններից՝ բնութեան անհասկանալի ոյժերը, իբր գերբնական էակներ, բնդունում են տարբեր ձևեր ու յատկութիւններ: Ըստ այնմ ծշակում է և ժամանակաշարութիւնը. որովհետև նրա ձևերը շուտով աւելի բարդանում ու թաւնաչփօթ են դառնում, մինչդեռ ազգանքների յաջողութիւնը կամ անյաջողութիւնը գերազոյն աբարածների համար կախւած է կրօնական պատւերների ճիշտ և բարեխիղճ կառարելուց, ապա վերջիններիս կատարելը յանձնւում է այնպիսի մարդկանց, որոնք իրենց նւիրում են բացառապէս կրօնի գործին: Այդ տեղերը, պարզ է, որ կարող էին գրաւել աւելի խելահասներն ու ճարպիկները, որոնք և այդպիսով գերիշխանութեան են հասել: Այդպէս է առաջ եկել քրմերի դասը, որ ամեն ազգի տիրող դասակարգերի պաշտպանութեամբ կարողացել է կարճ ժամանակում աւելի ու աւելի տարածել իր ազդեցութիւնը երկրիս բոլոր ազգերի մէջ: Որպէսզի հասնէին դրան, նրանք աշխատել են համոզել ժողովրդին իրենց կարեւոր նշա-

Նակութիւնն ու անհրաժեշտութիւնը, իսկ որպէս-
 ղի այդ բանում յաջողութիւն ունենան, անհրա-
 ժեշտարար ստիպւած են եղել հակառակ կանգնել
 մարդկանց լուսաւորութեանն ու ապաղաղ զար-
 դացմանը: Բնութեան և նրա երեւթիւթիւթի անպի-
 տութեանը միացան և տանջանքներն ու բռնու-
 թիւնները սեփական հրամայողների կամ օտար
 ազգերի ու նրանց առաջնորդների կողմից: Այդ
 տանջանքները յաճախ նկատուած էին իբր արժա-
 նի պտտուհաս այն յանցանքների համար, որոնց
 շնորհիւ կրօնական վարժութիւնների պահանջը
 միայն աւելանում էր: Ժողովուրդը յաճախ անկա-
 բող է դանւել սեփական ոյժերով թոթափել տի-
 բողների ու բռնաւորների լուծը. նոյն ժամանակ
 ծնւել է գերբնական փրկչի յոյսը—Մեսսիան, որ
 գերազոյն արարածներին մատուցած հաւատարիմ
 պաշտամունքի փոխարէն պիտի դադարէ օր-
 ղովուրդը: Այդպէս են և անալոգիական (նման)
 այլ հասկացողութիւնները, որոնք աւելի կամ պա-
 կաս վառ ձևով դոյութիւն են ունեցել համարեա
 բոլոր հին ազգերի մէջ՝ որ Փոքր Ասիայի և նրան
 կից Աֆրիկայի ազգերի պատմական զարգացման
 զօրութեամբ, յառաջադիմութեան աւելի ուժեղ
 թափ են ստացել յուղայականութեան մէջ, որից
 վերջն առաջ է եկել քրիստոնէութիւնը: Վերջինս
 պատմական հրապարակի վրայ երևացել է ոչ բո-

լորովին պատրաստի ու կրօնի ձևով, ինչպէս սո-
 վորաբար մեզ ուսուցանում են, այլ աստիճանա-
 բար միայն կրօնական սիստեմի է վերածւել, որի
 ձեռնաւորութիւնը՝ մարդկութիւնը ճնշելու մէջ, շու-
 տով հասկացան այն զարեշրջանի տիրապետող
 դասակարգերը: Քրիստոնէութիւնը ևս նոյնքան
 քիչ է «աստուածային յայտնութեան» արդասիք,
 որքան և միւս կրօնական սիստեմները (յուդայա-
 կանութիւնը, բուդդայականութիւնը, մահմեդակա-
 նութիւնը), որոնց հիմնադիրները նոյնպէս վճռա-
 պէս ընդդէմ են իրենց աստուածային առաքինու-
 թիւնը, որպէս այդ արել է, իբր թէ, քրիստոնէա-
 կան կրօնի առասպելական հիմնադիրը: Ու հարիւ-
 բաւոր միլիօն հետևողներ Բուդդայի, Կոնֆուցի-
 սի և Մահմեդի, նոյնպիսի խորին համոզմունքով
 հաւատում են վերջիններս աստուածային առաքե-
 լութեանը, որպէս և քրիստոնէութեան հետևող-
 ները Յիսուսի աստուածութեան:

Փիլիսոփայական սիստեմները ևս հետադասու-
 թեան չեն ենթարկել, ինչպէս, ձեր խօսքերին նա-
 յած, արել էք դուք, ևկսած Սոկրատից ու Պլա-
 թագորից և վերջացնելով Շոպէնհաուէրով, Ֆէյեր-
 բախով, Լասսալով ու Մարքսով: Ի դէպ՝ նկատեմ,
 որ վերջին երկուսի մտքովն էլ չի անցել փիլիսո-
 փայական սիստեմ հիմներ, ուստի և դուք կարող
 էք ձեր գիտութեան գանձարանից դուրս հանել

Հասսայի և Մարքսի փրիստոփայտիան սխտեմները: Բայց և այնպէս, ես մի քիչ զբաղել եմ քաղաքականութեան պատմութեամբ ու բնական գիտութիւններով և այդ դէպքում գտել, որ մասձելու բնութեան և բնական գիտութիւնների շուրջը եղած ուսումնասիրութիւններին ու բացումներին որոշ ծանօթ մարդու համար պէտք է շատ դժուար լինի քրիստոնէութիւնը «ամենալու և ամենակատարեալ» համարել: Բնական գիտութիւններով անկերքելի կերքով ապացուցած փաստերը, որ վերաբերում են երկրի կազմութեանն ու հասակին, մարդկութեան սկզբնաւորութեանն ու զարգացմանը՝ քրիստոնէութիւնը զրկում են հիմնական հոգից ու դէպի անկում տանում նրան: Յետոյ Ձեզ ևս, ինչպէս և ինձ, պէտք է յայտնի լինի, որ քրիստոնէութեան սկզբնաւորութեան ու զարգացման պատմութիւնը երբէք էլ չի վկայում նրա աստուածային ծագման մասին. որ, ընդհակառակը, վէճերը, անշատումները, պառակտումները և ամենազղւելի ձեռի փոխադարձ հալածանքները ծաղկեցին արդէն առաջին քրիստոնեաների մէջ, և որ զրան օրինակ տալիս էին նրանք, որոնք իբրեւ «եկեղեցու սպասաւոր և ուսուցանող» պարտաւոր էին «առաքինութեան» տիպար ցոյց տալ:

Քրիստոսը, որի գոյութիւնը շատ մութ է ճանցել, որից ոչ մի խօսք չկայ, որ իրեն

ձեռքով լինէր գրած, Աստուածամարդ է համարւել իր մակից շատ ուշ միայն: Ամբողջ դարերի ընթացքում Յիսուսի հետեւողների մէջ վիճաբանութեան առարկայ էր, թէ նա հաւասար էր Աստուծուն, թէ նա միայն նման էր նրան: 325 թւին միայն, Նիկիայի տիեզերական ժողովում, ուր նոյնպիսի կարգ ու կանոն էր տիրում, ինչպէս լեհական սէյմերում, և որտեղ քրիստոնէութեան երկու թշնամի բանակների ներկայացուցիչները հիմնական փաստեր չունենալով իրար անպատեցին ու խալտառակեցին և վերջ ի վերջոյ մինչև անգամ հիւնալի տուր ու դմբոց սարքեցին՝ վերջնականապէս օահմանեց Առածու և Քրիստոսի երկու միացեալ անձնաւորութիւնը:

Այն դարեշրջանի քրիստոնեայ հովիւները հարկադրւած էին մի ամուր և հաստատուն հայեացք օահմանել Քրիստոսի առ Աստուած ունեցած յարաբերութեանց մասին, քանի որ այդ յարաբերութիւնների վէճը բացի հովիւներից զբաւեց և հօտին և կարողացաւ վերջինից աւելի խելամիտ ու խոհուն մարդկանց կասկածամտութիւն ներշնչել: Այդ եղանակով արդէն քրիստոնեական եկեղեցու հիմնադրութեան առաջին քալին արւած էր, այսինքն պարզւած էր, որ բահանալով իրականութիւնը և անբոխ տիրապետող համեմատ

1003

13663-58



Հակառակ արեւմուտքի քրիստոնեաներին, արեւելացիներն իրանց համար մշակեցին Աստուածութեան երրեակ միութեան գաղափարը, որ գոյութիւն ունէր շատ աւելի հին կրօններումն էլ, ինչպէս եգիպտական Սյդ բանը եկեղեցուն օպառնում էր նոր վտանգ։ Ուստի և 56 տարի անց, Կոստանդնուպօլսի տիեզերական ժողովում երկու միացեալ անձնաւորութիւնը փոխւեց երբեակ միութեան, առաջին երկու միութիւններին աւելացնելով երրորդը—Սուրբ Հոգին։ Ահա ամենասուրբ երրորդութեան, քրիստոնէական եկեղեցու այդ ամենակարեւոր դաւանանքի պարզ ու բաւորովին ոչ աստուածային պատմութիւնը։ Յուսով եմ, որ դուք, աէր հայր, կճամաձայնէք, որ իմ ճկարագրած զուտ մարդկային պէպքերը շատ անգոր են քրիստոնէութիւնը աստուածացնելու համար ամուր հաւատ կրողն, և, որ, այդ կերպ սահմանւած դաւանանքները կարողացել են միլիօնաւոր հետևողներ գանել միմիայն մարդկանց ազիաութեան շնորհիւ, շնորհիւ այն բանի, որ նրանք չէին հասկանում, և, գծրադատարար, մինչև այսօր էլ չեն հասկանում իրենց յարաբերութիւնը դէպի տիեզերքը, բնութիւնն ու նրա երեւոյթները։ Միլիօններով այդ համակրողների գոյութիւնը մինչև այսօր հնարաւոր է միայն այն պատճառով, որ տիեզերական ժողովներում սարքած փոփոխանութիւնների ու կը-

ռիւնների օդնութեամբ այդ դաւանանքները, իրրեւ «աստուածային յայտնութիւններ»՝ եկեղեցու և պետութեան ծաղկման համար, միւսէլ են մարդկութեան մէջ, ու, այսպէս ուսած, ներս են ծծւել մօրկաթի հետ։ Եթէ XIX դարի երկրորդ կիսին հարիւր հազարներով մարդիկ բորբոքում են պապի անսխալականութեան նորադիւտ դաւանանքի համար, ապա զարմանալի չէ, որ համարեա երկու հարիւր տարւայ ընթացքում մարդկութեան խոշոր մասը կարողացել է հաւատալ հրաշքների ու քրիստոնէութեան յայտնութիւններին,

Հողեւորականութիւնը ստեղծել է ս. Երրորդութիւն, հողեւորականութիւնն էլ հնարել է սրբերի պաշտամունքը։ Օրինակ առաջին դարերում սրբերի պատկերներ չկային եկեղեցիներում։ Ելլիբի եկեղեցական ժողովը հանգիսաւոր կերպով արգելեց «պատերին յարգանքի ու պաշտամունքի առարկաներ ձևակերպելը»։ Եվսէփն ու Ոսկերեւանը,—եկեղեցու այդ երկու նշանաւոր հայրերը, որոնք ապրում էին Քրիստոսի Ծննդից 390 տարի յետոյ՝ սրբերի պատկերներ դործածելը համարել են կռապաշտութիւն։ Բայց և այնպէս քրիստոնէական եկեղեցում վերջերք ծաղկեց սրբերի, նրանց պատկերների ու մասունքների պաշտամունքը, առնել մինչև հիմա էլ դեռ ծաղկում է, ինչպէս ամենաչար «հեթանոսների» մէջ։

Ձեռքի համրիչները, որոնք այնքան մեծ դեր են խաղում կաթոլիկ եկեղեցու մէջ, վերցւած են հին եգիպտացիներից և բուդդայականներից. այդպիսով նրանց զործածելու սովորութիւնը դս-յութիւն ունեցել է արդէն «հեթանոսների» մէջ:

Երեսանների մկրտութիւնը արեւելիկների և տևտոնական ազգերի հնագոյն կրօնական սովորու-թիւն է: Քրիստոնեայ քահանաներն այդ բանը մրտ-ցրին IV դարում միայն, իսկ այժմ մկրտութիւնը կոչւում է «Աստծու սահմանած խորհուրդ»: Հա-ղորդութիւնը, որ միայն հրէական Զատիկի ձևափո-խութիւնն է քրիստոնէական ոգով, նոյնպէս վեր-ջերս է միայն ստացել իր այժմեան նշանակու-թիւնը: Նիկիայի հաւատոյ հանգանակում, ու կազմ-ւեց Քրիստոսի ծննդից յետոյ 325 թւին, դեռ ևս ոչ մի խօսքով չի յիշատակւած մկրտութեան մա-սին: Հրէական Զատիկը վերջերը փոխել է քրիս-տոնէականի:

Իւկին հաւատալը, որ այնքան աչքի բնկնող դեր է խաղում քրիստոնէութեան մէջ, որ բողո-քականութեան ջանքերով մշակւեց, և, որ տասնու-վեցերորդ ու տասնուեօթերորդ դարերում կախար-դների սոսկալի սյրելու պատճառ է դարձել՝ փոխ է առնւած աւելի հին «հեթանոսական» կրօններից:

Անդր-գերեզմանեան կեանքի պաշտամունքը, — ամենևին քրիստոնէական զաղափար չէ: Նա

կուլտուրական յայտնի աստիճանին հասած բոլոր հին ազգերի մէջ էլ գոյութիւն է ունեցել. իսկ քրիստոնէութիւնը միայն վերցրել ու իրեն համե-մատ մշակել և զարգացրել է նրան: Անդր-գե-րեզմանեան պաշտամունքը գոյութիւն ունէր նախ-կին յիշերի մէջ (տես Հոմերոսի երգերը) այնպէս, ինչպէս և հին գերմանացիների մօտ (մահաւնից յետոյ Վալդսլ գալը), և յունական փիլիսոփայու-թիւնը, Սոկրատից սկսած, այդ դաւանանքը մշա-կել է միակ Աստծու պաշտամունքի հետ, որ հա-կադրւում էր հասարակ ամբոխի բազմաստեածու-թեան: Նոյնը կարելի է ասել և, այսպէս կոչւած, «ահեղ դատաստանի» մասին, որ յիշւում է պար-սիկների սուրբ գրքերի մէջ, Քրիստոսի Ծննդից բաւական առաջ:

Մարդկութեան փրկութիւնը բարձրագոյն է-ակի ձեռքով, որ քրիստոնէութիւնը վերադրում է իր հիմնադրին, նոյնպէս բացառապէս քրիստոնէ-ութեան յատկանիշ չէ: Այդ մասին Բուդդան ա-սել է դեռ IV դարում Ք. Մ. առաջ, այդ ուսու-ցել է Զորօստարը, և մինչև անգամ Սոկրատը աղ-նարկել է այդ:

Այդպէս. կարելի է ապացուցել, որ ամենակա-րեւոր դաւանանքներն ու ծէսերը, որոնց վրայ կա-ռուցւած է քրիստոնէութիւնը՝ ուղղակի «հեթա-նոսութիւնից» են փոխ առնւած. և նոյնը կարելի

է հաստատել քրիստոնէական և զուտ կաթոլիկ աստուածապաշտութեան ձևերի վերաբերմամբ:

Ամեն բանի մէջ երևում է «հեթանոսութեան» հետեոյութիւն. ոչ մի տեղ ինքնուրոյն, սեփական մտքի հետքն անգամ չկայ, համարեա: Յոյների և հռոմայեցիների զոհի սեղանը, որոնք իրենց հերթին փոխ են առել եզրիպտացիներից՝ դարձել է քրիստոնէական բեմ, ճառախօսների ամբիոնը—քրիստոնէական ամբիոն: Եկեղեցու ծառայողների զգեստների գոյնն ու ձևն էլ էապէս նոյնն է, ինչ հին Եգիպտոսի քրմերինը. արևի Ողորիսի գոյները,—ինչպէս և անտրամադրուի չը հազնող եզրիպտացիների երկար հագուստները մինչև այսօր էլ քրիստոնէական զանազան դաւանութեան քահանաներ գործ են ածում: Ողորիսի-դատաւորի դաւադանը դարձել է քրիստոնէայ եպիսկոպոսի դաւադան: Ողորիսի-գեշերւայ քրմերի եղջիւրաւոր խօշորը դարձել է քրիստոնէայ քահանաների զլխի գարդը: Մինչև անգամ կաթոլիկ քահանաների կուլակը եզրիպտական քրմերից է փոխ առնւած, որոնց մօտ նա ընդունւած էր ճառադատութեայլ արեւաստուած Ողորիսի նշանակ: Օրհնած շուրը, խնկարկութիւնը, ձեռնադրութիւնը, բաժակը, երաժշտութիւնն ու երգեցողութիւնը, աղօթքի ժամանակ ծնրադրութիւնը, զլխի խոնարհումը շնորհների առաջ, փոխաստութիւնը և հօտի

բարձրաձայն գոչիւններն ի պատասխան քահանայի խօսքերի—այսինքն ծէսերն ու արարողութիւնները, որ մինչև այսօր էլ ասորեան նշանաւոր դեր են խաղում, մանաւանդ կաթոլիկ եկեղեցու մէջ, բոլորը առանց բացառութեան փոխառնւած են եզրիպտական հեթանոս աստուածապաշտութիւնից:

Սրեզակի ծննդի օրը, որ տարւայ ամենակարճ օրն է, դարձել է Յիսուս Քրիստոսի ծննդեան օրը: Նին-սեմիդական կրակի աստծու տօնը ամառայ մէջ՝ փոխւել է քրիստոնէական Յովհաննու օրը: Սիրիական աշնանային տօնը, որ հրէաների մօտ «Կուշչի» էր կոչւում, քրիստոնէաների մօտ «Կուշչի» էր կոչւում, քրիստոնէաների մօտ տօնւում է իբր Միքայէլեան օր: Յայանի է նոյնպէս, որ գերմանացոյ արեւադարձը տօնելը միացել է եզրիպտացոյ արևի ծննդեան տօնակատարութեան օրւայ հետ, որը վերջերք փոխւել է Քրիստոսի Ծննդեան տօնի:

Քրիստոնէական և հեթանոսական սովորութիւնների նմանութիւնն աւելի հեռու է գնում: Եզրիպտացիների արեւ աստծու զաղափարը միանգամայն համապատասխանում է ուշ ժամանակների քրիստոնէական Յիսուսի զաղափարին. թեքած գլուխ, ալիքաւոր մազեր, դէմքի մեղմ արտայայտութիւն, փայլ զլխի շուրջը և օրհնող ձեռները,—այս բոլորը ձևակերպւում են ինչպէս մէկի, այն

պէս էլ միւսի մօտ: Իզիդը որ եզրիպտացիների երկնքի աստուածուհին էր, մանուկ արևի հետ, բոլորովին համապատասխանում է քրիստոնէական տաստաճամօրը, ճառագայթների կամ աստղերի փայլումով շուրջնալած զլխով և մանուկ Քրիստոսը ձեռքին: Մինչև օրս էլ հարաւային Գերմանիայի մի քանի տեղերում կարելի է տեսնել աստաճամօրը մալրիւտունուհու կերպարանքով, որ վիպարում է եզրիպտական աֆրիկական հայեացքների ազդակցութիւնը:

Քրիստոնէական ուսուցմունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հին փիլիսոփայական հայեացքների ուղ և ծուծը, սկսած Սոկրատից և Պլատօնից, իսկ աստաճապաշտութեան քրիստոնէական ձևերը այնպէս ինչպէս մինչև օրս էլ գոյութիւն ունեն կաթոլիկ եկեղեցու մէջ, նոյնպէս մի խառնուրդ են հանդիսանում հեթանոսական աստաճապաշտութեան սիմվոլների ու ծէսերի հետ: Այդպէս, քրիստոնէութիւնը միանգամայն նման է միւս կրօններին. նա ներկայացնում է հոգևոր մղձաւանջ քաղաքակրթութեան մի ամբողջ շրջանի, որի ընթացքում նախկին կրօններն անցրել էին իրենց փայլուն ժամանակները: Քրիստոնէութիւնը — ուղղակի ճարգու ձեռքի գործ է, որ զարգացել ու ձևաւորւել է բոլոր բարքերի, նիստ ու կացի և դաւանանքի այն ժողովրդի, որի մէջ նա տարածւել է:

Նույն լուսնի աստաճուհու՝ Արտէմիսի զլխաւոր տաճարը փոխւեց քրիստոնէական տաճարի, աստաճուհու թրձանը հեռացնելով նրա միջից: Եփեսոսում Ռիանայի հեթանոսական տաճարը նւերեց ս. Յովհաննէսը, իսկ Նոմում ս. Պետրոսի եկեղեցում մինչև այսօր էլ հաւատացեալները համբուրում են Իւպիտերի բրօնզէ սաքը, որ, քահանաների ասելով, պատկերացնում է ս. Պետրոսին:

Քրիստոնէութեան համար առաւելութիւն են համարում, որ նա միւս կրօններից զանապետւում է միակ աստծու հաւատով — որը, աւիայն, միացնում է իր մէջ երեք անձը, Տեալով միակ, — մի ժողովրդութիւն, որ միանգամայն անմատչելի է ճարդկային առօղջ դասողութեանը: Սակայն դա նոյնպէս առասպելաբանութիւն է: Նրէաները Քրիստոսի Մենդից 500 տարի առաջ արդէն հաւատում էին սուրբ երրորդութեան, մարգարէ միակ Աստծու մէջ, և նոյն պաշտամունքը Քրիստոսից շատ դարեր առաջ գոյութիւն ունէր եզրիպտացիների մէջ: Քրիստոնէական բոլոր դաւանանքները, քրիստոնէական բոլոր եկեղեցական ծիսակատարութիւնները գոյութիւն են ունեցել արդէն Յիսուսի ծննդից մի քանի դար առաջ հնդիկների և եզրիպտացիների կրօններում, հետեապէս և ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ քրիստոնէութիւնը ներկայաց-

նում է այդ երկու հնազոյն քաղաքակիրթ երկրների հրօնների ընդօրինակութիւնը:

Եւ ինչպէս քրիստոնէական եկեղեցւոյ դաւանանքներն ու ծիսակատարութիւնները, համաձայն վեր պատմածին ներկայանում են ոչ թէ «Աստուածային արարչագործութիւն», այլ մարդկային ձեռքի գործ, այնպէս էլ այն գրութիւնը, որի վրա լինում է ըրիստոնէութիւնը, նոյնպէս ներկայանում է մարդկանց ստեղծագործութիւն:

Աստուածաշունչն ահադին նշանակութիւն ունի իբրեւ կուլտուրական-պատմական մի երևոյթ. բայց մինչև այսօր նրա հէնց այդ կուլտուրական-պատմական նշանակութիւնը համեմատաբար աւելի քիչ է գնահատութեան ենթարկել, իսկ եկեղեցին նրա վրա նայում է ոչ իբրեւ կուլտուրական-պատմական զօհումէնտի այլ իբրեւ աստուածային յայտնութեան հետեանքի վրա: Ստեփանն իբր ոչ պիտին, աստուածաշունչը, որ պարփակում է քաղաքակրթական երկհազարեան մի շրջան, որ ամենատարբեր դէպքեր է նկարագրում և տարբեր դարաշրջանների ու տարբեր հայեացքների տէր մարդկանց ձեռքով գրւած աւանդութիւններ է պարունակում իր մէջ, — հէնց դրա շնորհիւ լի քն է ամենախիստ և անլուծելի հակասութիւններով:

Այդ անորոշութիւնն ու հակասութիւնները, որ գտնւում են աստուածաշնչի կամ, այսպէս կոչւած, սուրբ դրքի մէջ, սկզբից ի վեր առիթ են տւել միանգամայն տարբեր ձևերի խորհրդածութիւնների և ամենակատաղի վէճերի ու աղանդների պատճառ դարձել քրիստոնէական եկեղեցւոյ մէջ, որոնք մինչև այսօր էլ զոյալութիւն ունեն: Այդ անորոշութիւնը և հակասութիւնները վաղուց արդէն կաթոլիկ ու աւետարանական եկեղեցին բազմաթիւ մանր աղանդների բաժանած կլինէր, եթէ հոգեւոր և մարմնաւոր իշխանութիւնները իրենց բոլոր ջանքերով արգելք չկանգնէին, որ մի անգամ ընդմիջտ հաստատուած վարդապետութիւնը անաղարտ մնայ թէկուզ բռնութիւնների միջոցով: Ուստի և, կաթոլիկ եկեղեցին, իւր տեսակէտից, միանգամայն բնական է վարւում աշխարհականներին աստուածաշնչի ընթերցանութիւնն արգելելով: Զէ՛ որ եթէ ուսումնականները չկարողացան համաձայնութեան գալ աստուածաշնչի բովանդակութեան առթիւ, էլ ի՞նչ կարելի է սպասել մարդկային պարզ առողջ դատողութիւնից: Մի դիրք չկայ, որ այնքան մարդ լինէր խենթացրած ինչքան աստուածաշունչը. խեղճ երազողները նրա մէջ որոնում էին այն, ինչ որ չկար այնտեղ, իսկ երբ նրանց թւում էր, թէ ճշմարտութիւն գտան, նր-

մանք պատահում էին մի ուրիշ տեղի, ուր հերք-
ւում էր այդ ճշմարտութիւնը:

Այդպիսով աստուածաշունչը չի կարող «աստ-
քու խօսք» լինել. մինչև անգամ այն մարդիկ չեն
զրհլ նրան, որոնց անունը վերնադրի մէջ զրած
է: Աստուածաշունչը ներկայացնում է այլևայլ
մարդկանց յօդաձևերի մի ժողովածու, որոնց
մեծամասնութիւնը անուշով բոլորովին
յայտանի չէ և որոնք ապրել են զանազան ժա-
մանակներում: Գրիստոսի կեանքն ու վարդապե-
տութիւնը մաքուր և անփոփոխ ներկայացնելու
յաւակնութիւնն ունեցող պատմաժքներ շատ են
եղել, այդ պատճառով էլ մեր տարեգրութեան ա-
ռաջին դարերում արդէն կառաղի փոփոխութե-
թիւններ ու կռիւներ բարձրացան նրանց. ստուգ
լինելու և գնահատելու առթիւ ճեղղահտէ միայն,
առանձին եկեղեցական ժողովների շնորհիւ կարե-
լի եղաւ որոշ չափով ամբողջութիւն պահպանել.
գրա համար նրանք ուշք չդնելով ստուգութեան
կամ կախարդութեան, շատ թուով այդպիսի պատ-
մաժքներ ոչնչացրին ու հերքեցին, որոնք կամ
չէին համապատասխանում նոր պայմաններին կամ
հակառակում էին ուրիշ պատմաժքների, որոնց
բնութիւնը ցանկալի էր:

Այդպէս, դարաւոր կռիւներից ու վէճերից յե-
տոյ կազմւած էր աստուածաշունչը, զաւանարա-

նութեան անրիժ գիրքը» և «Աստուածային խօսքը»
որի ճշմարտութեանն ու արժանտհաւատութեանը
կասկածանքով վերաբերելը, դեռ վերջերս էլ, պե-
տութեան տեսակէտից անգամ, համարւում էր ա-
մենամեծ յանցանք:

Մանրագնին ուսումնասիրութիւնները զոյց
տւին որ Աւետարանի և Գործք Առաքելոցի ոչ
մի մատեանը Գրիստոսի Մենդից յետոյ IV-դարուց
առաջ գրւած չէ եղել: Դուրս եկաւ, որ նոր և
ճին կտակարանի շատ տեղեր ներմուծւած կտոր-
ներ են, որ ինքնակամ արել են անյայտ հեղինակ-
ներ. իսկ եկեղեցին հնչել է նրանց իր շահերի ու
ցանկութիւնների համեմատ, և բարոզել ժողովր-
դին «Աստուած խօսք»-ի փոխարէն: Աստուածաշունչի
դոյութիւնն ունեցող բոլոր ձեռագրերի համեմատու-
թիւնը ցոյց տւեց, որ հինգ հազարից աւելի վա-
րիանտներ կան, որոնցից շատերը հապէս փոխում
են այն տեղի իմաստը, որին վերաբերում են: Ու
այդ բոլորից յետոյ էլ աստուածաշունչը «Աստու-
ած խօսք» է, անխախտ ու անձնւնմելի:

Համաձայնեցէք, տէր հայր, որ եթէ փիլիսո-
փայական սխտեմներն անգամ անդոր են քրիստո-
նէութեան աստուածայնութեան հաւատը տատանել՝
ապա նման փաստերը, պատմականօրէն ու զիտու-
թեամբ հառաատած, բնորոշակ են ատուրբերել ա-
մենաշէրմ հաւատացեալների հոգիներն անգամ: Այս

բոլորից չեաոյ, դուք չպիտի զարմանաք, եթէ յայտնեմ, որ ես հակառակորդ եմ ոչ միայն կաթողիկոսութեան, այլև առհասարակ ամեն կրօնի:

Կրօնը, որպէս վերն արդէն ասեց, ներկայացնում է ժողովրդի կամ ժողովուրդների, կուլտուրական յայտնի աստիճանի արդիւնքը, որոնք կանգնած են քաղաքակրթութեան նոյն աստիճանի վրա: Մինչև անդամ միենոյն կրօնը զանազան ազգերի մօտ միանգամայն տարբեր իմաստ է բնութանում, եթէ այդ ազգերի քաղաքակրթութեան աստիճանն սև մտաւոր զարգացման պայմանները տարբեր են: Սպանիայում կաթոլիկութիւնը, էապէս բոլորովին այլ երանդ ունի, քան Փրանսիական կաթոլիկութիւնը, իսկ Անգլիայի բողոքական հայեացքները նշանաւոր չափով տարբերում են Գերմանիայի բողոքական հայեացքներից: Բացի այդ, քաղաքակրթութեան աստիճանն ազդում է և կրօնի վրա: XIX դարի ամենաստուածապաշտ բրիտոնեաները կասկածում են շատ բաների մէջ, ինչ XV դարի բրիտոնեաներն անյոզդողդ հաւատում էին: Բաւական է միայն մտաբերել թէ գէլն ու կախարդներին հաւատալը XVI և XVII դարերում ինչ դեր է խաղացել:

Սակայն հաւատի դաւանանքներն ու հիմքերը տատանում են աւելի ու աւելի, քանի բնական զիտութիւնների և կուլտուրական-պատմական

հետադասութիւնների արդիւնքները մարդկանց աւելի լայն շրջաններին են յայտնի դառնում: Մեր մօլորակի զարգացման պատմութեան ժանօթութիւնը խորտակում է երկրի արարչագործութեան մասին եղած առասպելները, որոնք պատմած են աստուածաշնչի մէջ: Աստղաբաշխական հետազոտութիւններն ու զիւտերը ցոյց են տալիս, որ տիեզերքում երկինք չկայ, ու միլիօնաւոր աստղերը—ամենքն առանց բացառութեան մօլորակներ են, որոնք անկարելի են վարձնում հրեշտակների և «ուղղեցողների» գոյութիւնը:

Այդպիսով, բաւական պարզ ապացուցեց, որ բրիտոնէութիւնը ոչ «ամենալաւ», ոչ «ամենախաւարեալ» կրօնն է, որ նա միւս կրօններից աւելի կատարեալ ու լաւ չէ, ուրիշ խօսքով նա նոյնպէս անկատար ու թերի է ինչպէս և ուրիշները: Մարդկութեան պրոգրէսսի տեսակէտից բրիտոնէութեան վերացումն ուղղակի անհրաժեշտ է: Իսկ բրիտոնէական մօլալը,—կառէք դուք: Մօլալն անկախ է բրիտոնէութիւնից և ամեն կրօնից առհասարակ, մօլալը յարաբերական է ժողովրդի կուլտուրական մակերևոյթին: Բոլոր ազգերն էլ յայտնի կանոններ են մշակել մարդկանց գէպի իրար ունեցած զիրքի համար, և այդ կանոններին հետեւելը՝ ընդհանուրի շահերի տեսակէտից, համարւում է անհրաժեշտ, ոչ մի հասարա-

կութիւն առանց այդ կանոններն չի կարող դու-
թութիւն սւնենալ. նրանց խախտումը համարուած է
անբարոյականութիւն և չաճախ պատժուած է
երրորդական անձնաւորութիւնների կողմի զգո-
հութեան արտայայտութեամբ, կամ նիւթական և
մարմնական պատիժներով, որոնց, իշխանութիւնն,
իբր հասարակութեան ներկայացուցիչ, դնում է
մեղապարտի վրա: Հեռեկալ երկու օրինակները
կարող են յայտարարել, թէ ինչպէս տարբեր կերպով
են վերաբերուած որոշ հիմնադրութիւններին միե-
նոյն կաթոլիկ եկեղեցու հետևողները: Որ ամուս-
նութիւնը կարող է օրինական լինել և առանց
քահանայի օրհնութեան Ֆրանսիացի կաթոլիկը
համարուած է բնաւ, իսկ աստուածասէր կաթո-
լիկ-գերմանացին այդպիսի ամուսնութիւնը համա-
րուած է ապօրինի կենակցութիւն, այսինքն մի տե-
սակ ամենաանբարոյական բան: Հիւսիսային-Ամերի-
կայի կաթոլիկները եկեղեցին պետութիւնից բա-
ժանելը դնում են բոլորովին բնական մի երևոյթ,
իսկ շատ գերմանացի կաթոլիկներ այդ բանն ան-
ւանում են պետութեան կողմից եկեղեցու համար
անպատկառ դաւանանութիւն: Այդպէս ուրեմն,
այն ինչ մի քանիսը բոլորովին բնական և բարո-
յական են համարում, միւսները դատաւարտուած են,
որպէս անբարոյական ու դատապարտելու արժանի:
Սէր առ մերձաւորը, սէր առ մարդիկ՝ պատի-

րանները, նոյնպէս և ժողովրդութեան մասին—
այդ բոլոր պատկերաններն առանց բացառութեան
կան բոլորականութեան և մահմեդականութեան
մէջ: Նրանց խոստովանել են բոլոր ազգերը՝ քա-
ղաքակրթութեան որոշ աստիճանին հասած, իսկ
հնդիկները, չինացիները, պարսիկները և արաբնե-
րը աւելի լաւ են պահում նրանց գործնական
կեանքում, քան քրիստոնէութեան հետևողները,
որոնք բոլոր այդ հրաշքները յետաձգում են «հան-
դերձեալ», անդր-գերեզմանեան կեանքի համար:
Սիրոյ կրօնը՝ քրիստոնէական կրօնը, տասնեութից
աւելի դարերի ընթացքում օտարադաւանների նը-
կատմամբ եղել է ատելութեան, հալածանք-
ների և ճշմարտեան կրօն: Մի կրօն չկայ աշ-
խարհում, որ մարդկութեանն աւելի արիւն ու
արցունք լինէր նստած, քան քրիստոնէութիւնը.
մի կրօն չկայ, որ այնքան նողկալի յանցագործու-
թիւնների առիթներ լինէր ներկայացրած, ինչքան
գա. ու քրիստոնէայ բոլոր դաւանութեան քահա-
նաները մինչև այժմէլ, երբ խնդիրը պատերազմի
ու մասսայական կոտորածների շուրջն է՝ պատ-
րաստ են իրենց օրհնութիւնը տալ: Եւ մի իշխա-
նութեան հողւորականութիւնը հանդիսաւոր ա-
ղերսանքներով դիմում է ընդհանուր Աստծուն,
սիրոյ Աստծուն՝ թշնամու բանակն ինքը դար-
ձնելու:

Եթէ այժմ եկեղեցին չի բռնադատում մարդ-
կանց այն աստիճան, ինչքան առաջ, այդտեղ պատ-
ճառը ոչ թէ քահանաներն են և եկեղեցու սպա-
սաւորները, այլ համամարդկային պրօդրէսք, որ
քահանաների ու եկեղեցու հակառակ և նրանց
ընդդէմ կուելով՝ հասունացել է: Դուք ասում էք
թէ կրօնին ծառայողների արարքները չի կարելի
ի նախատինս կրօնի գնել: Բայց լսէք, սիրելիս:
Նորք քահանաներն ամենահին ժամանակներից մին-
չև մեր օրերը արհամարհում են կրօնի բարոյադի-
տական սկզբունքները և օրէց օր դաւաճա-
նում են այդ սկզբունքներին (կրկնում եմ, որ բա-
րոյադիտական սկզբունքները անբաժանելի շաղ-
կապւած չեն կրօնի հետ), ապա էլ ինչ արժէք
կարող է ունենալ այդպիսի կրօնը: Մինչդեռ ամե-
նաչեղմանդ հաւատացեալները, երեւելիով թէ
բարիք են անում, ամենից աւելի են վնասել
մարդկութեանը. որովհետև ամեն կասկածանք
դաւանանքների մէջ՝ հերձաւած են ընդունել, ամեն
տատանում կրօնական հիմքերի՝ ամենամեծ յանցա-
գործութիւն, որ նրանք արմատախիլ են արել հը-
րով ու սրով: Խաչակրաց արշաւանքները, կրօնա-
կան տնթիւ հալածանքները, ինկվիզիցիան, հրէա-
կան դարշանքները կախարդական գործողութիւն-
ները, օրոնց պատճառով հարիւր հազարաւոր մար-
դիկ են ոչնչացել իբրև նախապաշարմունքների

դոհ, — բոլոր մօլեռանդ քահանաների դրդումե-
րով ու յորդորներով է կատարւել, խօհեմ և սառ-
նարիւն քահանաների հովանաւորութեամբ, կրօնի
ոյժը տարածելու, իրենց ազդեցութիւնը տարա-
ծելու և յանախ շահագործալու նկատումներով:

Քրիստոնէութիւնը թշնամի է ազատութեան
և քաղաքակրթութեան: Իբ ուսուցմունքի մէջ
«Աստծու սահմանած» իշխանութիւններին հլու
հնազանդութիւն, խոնարհութիւն և համբերու-
թիւն քարոզելով, կապւած նրա հետ, թէ մարդիկ
իրենց բոլոր տառապանքների փոխարէն այս կեան-
քում, պէտք է երանելի վարձատրութիւն ստա-
նան հանդերձեալ կեանքում, ըրիստոնէութիւնը
շեղել է մարդկութեան իր նպատակից — բաղմա-
կողմանի կատարելութիւնից, բարձրագոյն զարգա-
ցումից ու ձեռք բերւած բարիքների վայելչու-
թիւնից, Քրիստոնէութիւնը մարդկանց պահպանել
է ճնշումների ստրկութեան մէջ և մինչև մեր ժա-
մանակն էլ նա հանդիսանում է ամենակարեօր
գործիք՝ քաղաքական և սոցիալական շահագոր-
ծութիւնների: Յունական և հռոմէական քաղա-
քակրթութեան անկումից յետոյ ըրիստոնէութիւնը
հազար տարուց աւելի տիրեց Նւբոպային, ու, հե-
տևանքին, ազդերը ազիտութեան և բարբարոսու-
թեան մէջ թազեցին: Սպանիան, որտեղ այն ժա-
մանակ, այսինքն հեթանոս մովրերի կամ արաբնե-

րի տիրապետութեան օրով քրիստոնէսներն ու հրէաներն օժտւած էին այնպիսի իրաւունքներով, ինչպէս ժամանակակից քաղաքակիրթ երկրներում, այն էլ ոչ ամեն տեղ հրէաների նկատմամբ— Սպանիան դարձաւ Փանատիկոսութեան և կրօնական հալածանքների օջախ՝ երբ քրիստոնէսները արաբներին դուրս արին և Սպանիայում քրիստոնէութիւնը տիրապետող կրօն դարձաւ։ Ամենածաղկած քաղաքներն ու ամբողջ նահանգներ դատարկւեցին, արաբական փալլոսն զիտութիւնը օգնչացւեց և այդպիսով, ամբողջ երկիրը զահաւիժւեց մինչև քաղաքակրթութեան այն ստոր աստիճանը, որից մինչև այսօր էլ չի կարողանում բարձրանալ։ Գիտութիւնն ու պրօգրէսը, որ XII դարում արթնացաւ Իտալիայում, իսկ XV դարում Գերմանիայում՝ ոչ թէ քրիստոնէութեան ազդեցութեամբ էր, այլ շնորհիւ հին-հեթանոսական գրականութեան ուսումնասիրութեան, որ դուրս հանեց նրան փոշու ու աղբի այն կոյտի տակից, որի մէջ քրիստոնէութիւնը թաղել էր նրան, որ սակայն՝ հակառակ եկեղեցու յարձակումներին ու հալածանքներին, շարունակ աւելի ծաւալւեց, մարդկութիւնը պրօգրէսի ճամբին գնելով։ Կրօնը միայն միջոց է եղել որոշ նպատակի հասնելու՝ մասսաների վրա իշխանութիւն տարածելու ու կռելու այդ իշխանութիւնը։

Գրքոյկիս մէջ ես լիշեցի արդէն, որ զանազան դարաշրջանների հեռատես ու անւանի մարդիկ նայում էին կրօնին միայն իբրև մի միջոցի վրա, որով կարելի է նպատակի հասնել,— քաղաքական իշխանութեան (Սրիստոտէլ, Մակկիավելլի)։ Աւելորդ չի լինի, այդ խնդրի առթիւ, բերել և եկեղեցումի քանի հեղինակաւոր անձանց հայեացքները։ Սիներիչ եպիսկոպոսը Գրիստոսի ծննդից յետոյ 410 թւին յայտարարեց. Ժողովուրդն անպատեալ ուղում է, որ իրեն խաբէն, առանց խաբէութեան նրա հետ միանգամայն անկարելի է գործ ունենալ... Դալով ինձ, ես, միշտ պէտք է փիլիսոփայ լինեմ ինձ համար, և քահանայ (այս դէպքում խաբեբայ) ժողովրդի համար»։ Գրիգոր Նազիանցին գրում էր Յերոնիմին. «Ժողովրդի վրայ տպաւորութիւն գործելու համար միայն ճշմարտութիւն է հարկաւոր. Ժողովուրդը քանի քիչ է հասկանում, այնքան աւելի է սքանչանում ու խոնարհւում։ Մեր հայրերն ու ուսուցիչները յաճախ այն չեն ասել, ինչ մտածել են, այլ այն՝ ինչ նրանց դրդել են հանգամանքներն ու անհրաժեշտութիւնը»։ Այն ժամանակ, երբ պապը Յուլիոս II էր (1475—1513 թ.), չուով պալատական կեանքը աչքի էր ընկնում անբաւ խրախուսանքներով, յոփութիւններով և արհամարանքով զէպի կրօնը։ Մի անգամ աստուածամուկ Գերմանիայից մեծ քանակութեամբ դրամ ստացւեց, և

պապն այն ժամանակ իր կարգինալներէց մէկին առաջ հեռեկալ ուշադրաւ խօսքերը. «Զէ, եղբայր, Յիսուս Քրիստոսի մասին եղած առակը բաւականին օգտաւէտ է»: Թէ որպիսի կարծիք ունէր Փրանսիական զեսպանը Պօղոս III պապի բարոյականութեան մասին տասնվեցերորդ դարում, ցոյց է տալիս նրա իր արքունիքին դրած նամակի հետեւեալ կտորը. «Պապը և իւր նախարարները (կարգինալները) մինչև հիմա ամեն կերպ խաբել են մեզ: Այժմ նրանք աշխատում են թաղցնել այդ, կեղծաւորութիւնով ու խորամանկութիւնով և ուղղակի լրբութեան են հասնում»: Պօղոս IV պապը ուղղահաւատ կաթողիկ սպանացիների դէմ կուելու էր կանչում ոչ միայն բողոքականներին, այլ և քրիստոնեաների («վաղեմի թշնամիներին») — տաճիկներին, որոնց նա հրաւիրում էր Իտալիային պատկանող Սիկիլիայի և Նէապոլիսի վրայ յարձակւելու: Աղէքսանդր VI պապն իր հաբաղատ ազգիկա՝ հռչակաւոր Լուկրեցիա Բօրչիայի հետ արիւն ապղծութեամբ մեղանչեց. իսկ մի խնջոյքի ժամանակ, երբ նա ուզում էր թունաւորել Էթ կարգինալների, վերջիններս կարողացան կաշառել սպասաւորին և նրան թունաւորեցին իր որդու հետ: Այդպէս, չնայած իր կուսակրօնութեան, նա ունէր տղայ էլ, ազգիկ էլ: Դուք առարկում էք իմ պնդումի դէմ, թէ եկեղեցին և պետութիւնը միշտ սրտառուչ դաշ.

նակցութեամբ են դործել, երբ խնդիրը ժողովուրդը շահագործելուն է վերաբերւել. սակայն մոռացել էք ապացուցել թէ իմ այդ հաստատումը անհիմն է: Եթէ առհասարակ մի տէրութիւն պէտք է քրիստոնէական տէրութեան նմուշ հանդիսանար՝ այդ, անտարակոյս, Եկեղեցական Պետութիւնը պիտի լինէր, որ գտնւում էր պապի և բարձրագոյն հոգեւորականութեան անմիջական կառավարութեան տակ: Շատ լաւ, ինչ պատկեր էր ներկայացնում այդ Պետութիւնը մինչև իր գոլութեան վերջին օրերը: Ամենաողորմելի, որպիսին միայն կարելի էր գտնել Եւրոպայում:

— Ծայրայեղ արհամարած, տզիտութեան ու նախապաշարօնների մէջ ընկղմւած ժողովուրդ. աշխատանքի շահագործում ու հարստահարում. ամենասարսափելի չքաւորութիւն ու մաքայական ապշեցնող թշւառութիւն. աւելի մեծ ծաւալով ռերագործութիւն, քան աշխարհի մի ուրիշ պետութեան մէջ. հասարակութեան անապահով վիճակի առաջ դառնալը. կարգ ու կանոնի կատարեալ բացակայութիւն պետական գործերի վարչութեան մէջ և քրիստոնէական մերձաւորի սիրոյ օտնակոխում, որն ամենից առաջ օտարադաւաններին հաշտ նախելու մէջ պիտի երևար, — անա թէ որպիսի պատկեր է ներկայացնում քրիստոնէական օրինակելի պետութիւնը: Եւրոպայի ամեն պետութեան մէջ,

որտեղ եկեղեցու ներկայացուցիչները, լինի բողոքական թէ կաթոլիկ, ձայն ունեն կառավարական հարցերում կամ ժողովրդական ներկայացուցչութեան մէջ, միշտ իրենց ազդեցութիւնը դորձ են դնում ժողովրդի թշնամի պետական իշխանութիւնը պաշտպանելու ու ամրացնելու համար: Ներկայ բուպէին կաթոլիկ հոգեւորականութիւնը Գերմանիայում, արտաքուստ բացառութիւն է կազմում, բայց ճիշտ որ, արտաքուստ միայն: Մնորհիւ թեթեամիտ քաղաքականութեան, որպիսին երբ և իցէ տիրադ դասակարգին պատկանող անձը վարել է, կաթոլիկ հոգեւորականութիւնն ընկել է ճնշւած տարրի դրութեան մէջ: Հէնց այդ դրութիւնը և միմիայն այդ դրութիւնն է, որ դրդում է յիշեալ հոգեւորականութեանն իր պահանջները յայտարարելու, որոնք այլ պայմաններում ոչ կը յայտարարէր և ոչ էլ կը խրախուսէր: Բաւական պարզ է, թէ դեռ մի քանի տարի առաջ Բաւարիայում, Պրուսիայում և ուրիշ տեղեր կաթոլիկութեան առաջնորդներն ու բանիմաց ներկայացուցիչները (առաջնորդւողներն ու անդիտակցական տարրերը հաշիւ չեն) ինչ դիրք բռնեցին. նրանք միշտ եղել են աչափողմեան ծայրայեղ աշակողմեան, ինչպէս նրանք ներկայումս գտնւում են Աւստրիայում և մանաւանդ Փրանսիայում և որ, շուտով նորէն Գերմանիայում

կերևան*): Այդպիսով, ոչինչ իլլիւզիաների մէջ չենք ընկնում այդ դէպքում: Փսենք այլ կերպ արդեօք կարո՞ղ էր լինել: Մարդկութեան պրօգրէսսի պայման հանգիստանում է հռիւ յայտարարելը ամեն արտօնութիւնների ու ամեն ախրապետութեան: Եկեղեցին ժողովրդին ախրապետում է ոչ պակաս քան պետութիւնը: Հեղինակութեան ու կոյր հաւատի վրայ հիմնելով, նա ստիպւած է կռւել այն ամենի դէմ, ինչ կարող է տատանել այդ հիմքերը, այսինքն գիտութեան և քաղաքակրթութեան դէմ.— դէպի որոնց ձգտում է սօցիալիզմը, — սօցիալիզմը, որ հանդիսանում է իսկական մարդասիրական և ռամկավարական վարդապետութիւն, որ իրօք ցանկանում է իրականութիւն դարձնել բարոյական օրէնքները. օրէնքներ, որ տասնևութ դարերի ընթացքում եկեղեցուն ծառայել են համարեա միմիայն իբրեւ մասսաները շահագործելու ու հարստահարելու դիմակ. սօցիալիզմը, որ ձգտում է իրականացնել ընդհանուր հաւասարութիւն, ընդհանրական սէք, ընդհանուր երջանկութիւն, ոչ թէ նրա համար, որ այդ բաները քարոզել են Քրիստոսը, Բուդդան կամ Մահմդը, այլ որովհետեւ այդ նպատակներին ու իդէալներին, մարդկութիւնը աշխարհի ամեն ծայրերում, գիտակցօրէն թէ բնազդով, միշտ ձգտել է կրօնների ու պետական ամեն տեսակ կազմերի միջոցով, որոնց

*) Այս գուշակութիւնն իրօք կատարւեց:

նա նորէն կձգտէր, եթէ աշխարհում անգամ գոյութիւն չունենային ոչ Բուրդան, ոչ Քրիստոսը, ոչ Մահմեդը: Վերջիններս, աշխարհը ներկայացնելով արցունքի հովիտ, ցաւ ու համբերութիւն քարոզելով, մարդկանց ցոյց տալով հանգեր ձեռքի կեանքը՝ որի գոյութիւնը չի կարող հաստատ լինել, քանի որ դա ցնորք է,—մարդկութիւնը կաշկանդել են ամենաժանր շղթաների մէջ և խոչընդոտ հանդիսացել նրա պրօգրէսսին:

Այն ամեն բարիքները, որ առաջ եկան քրիստոնէութեան օրով՝ նրան չեն պատկանում, իսկ այն բոլոր չարն ու բարին, որ նա բերեց իր հետ՝ մենք չենք ցանկանում: Այդ է, երկու խօսքի մէջ, մեր հայեցակէտը:

Այժմ, դուք, տէր-հայր, կհասկանաք, թէ ինչպէս տարբեր են մեր ձգտումները քրիստոնէութեան ձգտումներից: Ձեր եպիսկոպոսները, եկեղեցիների աւագները, ձեր կոմսերը, բարօններն ու բուրժուաները, որ կանգնած են կաթոլիկ շարժման դուրս՝ մեզ հետ-ընդհանուր ոչինչ չունեն: Նրանք չեն ձգտում մարդկանց հաւասարութեանն ու երջանկութեանը, քանի որ, հակառակ դէպքում, նրանք ստիպւած պիտի լինէին հրաժարել իրենց արտօնեալ դիրքից, կամ գոնէ, որ նրանցով օգտւէին մարդկութեան բարօրութեան իրականացման համար, որը նրանք, իբր թէ, ցանկանում են: Սա-

կայն նրանք հանդիսանում են արտօնէութիւնների, դասակարգային ու որոշ խաւերի գերիշխանութեան դիւստոր պաշտպաններ: Նրանք կամենում են ոչ թէ արդարադատութիւն, այլ բարեգործութիւն, ոչ թէ հաւասարութիւն, այլ անմոռնչ հնազանդութիւն, ոչ թէ դիտութիւն, այլ հաւատ: Մինչդեռ երբ ժողովուրդը պահանջում է մարդավարի կացութիւն ու իր սեփական աշխատանքի արդիւնքը՝ նրանք բախտի ժողով հնազանդութիւն են քարոզում և միսիթարում նրան հանդերձալ կեանքի հեռանկարով, և այդ այն ժամանակ, երբ իրենք ապրում են շուքի ու ճոխութեան մէջ, լզփացած ուրիշի աշխատանքով: Կաթոլիկ ժողովուրդը, որ չարչարւում ու թառապում է, որ մինչև այսօր այդ մարդկանց է հետևել,—մերն է, և մենք ժառանգ ենք, որ մի գեղեցիկ օր նա կհասկանայ իր դրութիւնը և կանցնի մեր կողմը: Այն ժամանակ, եթէ շահագործող ու հարստահարող ցածր հոգեորականութիւնը, որի պրօլետարական կացութիւնը դուք այնպէս բնորոշել էք՝ նոյնպէս կանցնի մեր շարքերը, մենք գրկաբաց կընդունենք նրան: Նա կըմբռնի այն ժամանակ, որ իդէալական այն իղձերը, որ ինքն իդուր շանք է թափել իրականացնել իր եկեղեցու մէջ՝ կարող են իրականանալ միմիայն մեր շարքերում և միմիայն մեզնով: Եւ մենք աւելի վսեմ գործ կտանք, քան կըօնի դատարի ծիսակա-

տարու[թիւներ, կրօնի, օր մինչև հիմա, բոլոր այլ կրօններին նման, մարդկութեան իսկական պրօգրէսսին խօչընդոտ է հանդիսացել: Դուք, տէր-հայր, ձեր սեփական խոտածվանքին նայած՝ նիւթապէս աւելի վատթար կացութեան մէջ էք, քան ամեն տան սպասաւոր կամ սպասաւորուհի, և վարուժ էք ամենաթշուառ պրօլետարի կեանք. մինչդեռ եպիսկոպոսներն ապրում են որպէս բարօններ և օգտուում արդիւնքներով ու մեծարանքներով: Եթէ, ինչպէս դուք էք ասում, ըրիստոնէութիւնը ձրգտում է միևնոյն նպատակներին, ինչ սօցիալիզմը՝ ապա միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէս է նա կարողանում հովանի լինել գասակարգային խրատութիւնների ու անհաւասարութեան այդ սիստէմին և պաշտպանել նրան իբրև «Աստծու սահմանած հիմնադրութիւն»): Կարո՞ղ է արդեօք այդպիսի կրօնը մեր յարգանքներն ու յորդորները վաշելել: Կամ երևի դուք կարծում էք, թէ մենք պէտք է սպասենք քնդհանուր բարօրութեանը և մարդկութեան երջանկութեանը, մինչև որ կրօնը կտայ մեզ, այն կրօնը որ տասն և ինն դար է արգէն, ինչ դոյութիւն ունի և մինչև այսօր անկարող է եղել գոնէ իրէն ծառայող քահանաներին հէնց իր սկրգբունքները ներշնչել: Այդ, դէպքում մենք ստիպւած կլինէինք նորէն ամբողջ դարեր սպասել, մինչդեռ մարդկային կեանքը շատ կարճատև է: Ոչ, և

ոչ՝ Որքան էլ դուք աշխատէք տարբերութիւն
 որոնել եկեղեցու և նրա («առանձին») ծառայողների
 մէջ՝ ձեզ այդ չի յառողւի և ոչ էլ այդ հնարաւոր է։
 Այն ինչ դուք աշխատում էք ցոյց տալ իբրեւ բա-
 ցառութիւն՝ սկզբունք և օրէնք է, իսկ ձեռ օրէնքը
 մի բացառութիւն է և դուք զիտէք, որ բացա-
 ռութիւնը երբէք չի խախտում օրէնքը։

Ուստի և ես չեմ կարող համաձայնել ձեր
կարծիքի հետ, որպէս թէ քրիստոնէութիւնը ճշդ-
տում է միեւնոյն նպատակներին, ինչ որ սօցիալիզմը։
Քրիստոնէութիւնը և սօցիալիզմը թըշնամի են
իրար, ինչպէս կրակ և ջուրը։ Այսպէս կոչւած բա-
րի սերմը քրիստոնէութեան մէջ, որ սակայն, ես
չեմ գտնում նրանում չի պատկանում բացառապէս
քրիստոնէութեանը, այլ՝ ընդհանուր մարդկութեանը։
Իսկ նրա ամբողջ էութիւնը կայանում է—բաղմա-
թիւ ուսուցմունքների ու դաւանանքների մէջ, որ-
ոնք թշնամի են մարդկութեանը։ Թողնում եմ, որ
ինքներդ ձեր տեսական գովմանների հակասութիւն-
ները համաձայնեցնէք զործնականի հետ։

«Գերմանական ընկառուածքի և լոնդոնացիների պարզամեկնապաշտ գործունէութիւնը և սօցիալ-դեմոկրատիան» զրքոյկի հեղինակը:



- 33) Ն. ԼԵՆԻՆ. «Բաղաբական կուսակցութիւնները Ռուսաստանում
և պրոլետարիատի վերաբերմունքը» —
- 34) ՎԻԼՀԵԼՄ ԼԻԲԿՆԵԽՏ. «Սարգստի ու ճանճերը» — գինը՝ 1 ռ.
- 35) Ն. ԵՆՏՈՆՈՎ. «Կարլոս I. Լիւզովիկ X V I. Նիկոլայ II — գինը՝ 1 ռ.
- 36) Վ. ԿԵՐԺԵՆՏԵԻ «Անգլացիներն իրենց պէտք են ճիշտ իրանց իշխանութեան տակ գտնուող գիւղացիներին» — գինը՝ 3 ռ.
- 37) [անթիւ]. «Գիւղացիական Վոյննաիներ ծախի» — գինը՝ 1 ռ. 50 կ.
- 38) [անթիւ]. «Պրոլետարական յեղափոխութիւնը և Արմէնիայի բուլճարիները» — գինը՝ 3 ռ.
- 39) [անթիւ]. «Ազգութիւնների ինքնորոշումն և Վոյննաիները» — գինը՝ 1 ռ. 50 կ.
- 40) Ա. ԿԵՐԺԵՆՏԵԻ. «Կոմկաւի պրոլետարիատի պատմութիւնը Կարլ Մարքսի և Ալիքսանդրի» — գինը՝ 2 ռ.
- 41) «Կարմիր Աստղ» (երկրորդ հրատարակութիւն) — գինը՝ 50 կ.
- 42) «Խճիւղ և տեւի հոկտեմբերան յեղափոխութիւնը» — գինը՝ 1 ռ.
- 43) Վ. Ի. ՈՒԼԵՆՈՎ. (Լենին). Համառօտ կենսագրութիւն (պատկերով) — գինը՝ 1 ռ.
- 44) ԲԱՆԻՈՐ ՀԱՅԳ. «Կարմիր բանակ» — գինը՝ 3 ռ.
- 45) ՎԱՏԻՆ. Խճիւղ բան և կոմունիստներ — գինը՝ 1 ռ.
- 46) ԲԻՅ. «Գիւղական կոմունիստներ» — գինը՝ 1 ռ.
- 47) Վ. ՏԵՐԵՆՆ. «Խճիւղ և ասում Լենինը գիւղացիներին» — գինը՝ 2 ռ.
- 48) ԲԻՍՏԵՆՆԱՅԻ. «Իմպերիալիզմ» — գինը՝ 2 ռ.
- 49) Ա. ՄԱՐՏՈՆԻ. «Ազգային հարցի աւթիւն» — գինը՝ 3 ռ.
- 50) Ա. ԿԵՐԺԵՆՏԵԻ. «Կոմկաւեան պրոլետարիատի պատմութիւնը և Ալեքսանդր Մարքսի» — գինը՝ 3 ռ.
- 51) Ա. ԿԵՐԺԵՆՏԵԻ. «Հայաստանի ապագան»
- 52) «Բազմի 26 կոմունիստ-բեկերները յիշատակին».
- 53) Ն. Մ. ԼՈՒԿԻՆ (Ի. ԵՆՏՈՆՈՎ). «Եկեղեցի և պետութիւն» — գ. 6 ռ.
- 54) ԵԱՂ. ԼԱԼԱ. «Երկու ծահ» պատկեր.
- 55) ԱԼ. ՄԱՐՏՈՆԻ. «Միջայեւ Նալբանդեան» — գինը՝ 3 ռուբ.
- 56) «Հայրենիք վերադարձած գերիներին». Ողջոյն Խորհրդային Ռուսաստանից — գինը՝ 1 ռուբ.
- 57) Ե. ԵԱՐՈՍԼԱՎՍԿԻ. «Հայրն ու Որդին» (Վիլհելմ և Կարլ Լիբկնեխտները) — գինը՝ 1 ռուբ.
- 58) ՊԱՆԵՎՈՒԿ. Կոմունիզմ և Դեմոկրատիզմ — գինը՝ 1 ռուբ.
- 59) ՍՏԱԼԻՆ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնը և ազգային հարցը — գինը՝ 2 ռուբ.
- 60) ԿՕՆԿՕԼ. Փարիզի կոմունիստներ — գինը՝ 3 ռուբ.
- 61) Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան Սահմանադրութիւնը. 2-րդ հրատար. — գինը՝ 6 կոպեկ — շփարիզմը և Արմէնիայը:

ՊԵՏՏՐԵԱՍ ԵՆ ՏՊԵՐՈՒԹԵԱՆ ՀԵՄԸՐՈՒ

- 1) Ե. ԼԵՆԻՆ. Պետության և յեղափոխության թիւն.
- 2) Ե. ԼԵՆԻՆ Իմպերիալիզմ.
- 3) Գ. ՄԵՐՔՍ. Յեղափոխության և հակայեղափոխության թիւնը Գերմանիայում:
- 4) Գ. ՄԵՐՔՍ. Բաղադրական պատերազմը Ֆրանսիայում:
- 5) ԳԵՈՌԳԻ. Գ. Մարքսի տնտեսական ուսմունքը:
- 6) ԳԼԵԽԼՆՍԿ. Մարքսիզմի հիմնական խնդիրները:
- 7) ԳՕԿՐՕՎՍԿԻ. Յարիզմ և յեղափոխության թիւն:
- 8) Գ. ԼԵՖԵՐԻ. Բուրժուազիայի հայտնաբերության թիւնը:
- 9) ԳՕԼԼՕՆՏԵՅ. Ընտանիք և կոմունիստական հասարակության թիւն:
- 10) ՏՐՕՅԿԻ. Հոկտեմբերեան յեղափոխության թիւնը.
- 11) ԳԼՄԵՆՍԿ. Իմպերիալիզմ և Բալկանեան Հանրապետության թիւնները.
- 12) ԼԻԲԿՆԵՒՏ. Երկու աշխարհ:
- 13) ԿՐՈՒՊՍԿԵՆ. Ժողովրդական կռիւն թիւնն ու ղեկավարումը:
- 14) ՏՐՕՅԿԻ. Ժան ժորէս:
- 15) ՓՐ. ԷՆԳԵԼՍ. Կոմունիզմի սկզբունքները (Կոմունիստական Մանիֆեստի նախնական խմբագրության թիւնը):

Իրեն Է՛ 6 րուր.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0044729

5965

